ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆԱՉ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հայաստանում կայուն գյուղատնտեսության, ոռոգման, կենսաբազմազանության պահպանության և կլիմայական գործողությունների ոլորտներում ԵՄ աջակցությունն ուղղված է բնական ռեսուրսների կայուն կառավարմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, կլիմայի փոփոխության ազդեցություններին դիմակայելու կարողությունների ամրապնդմանը և կանաչ տնտեսության զարգացմանը:

ԵՄ-ն ներդրումներ է կատարում ջրախնայող ենթակառուցվածքների և գյուղատնտեսական լուծումների մեջ, աջակցում է ֆերմերների կարողությունների զարգացմանը, կենսաբազմազանության պահպանությանը, էկոլոգիապես պատասխանատու բիզնեսներին և Սևանա լճի պահպանությանն ուղղված նախաձեռնություններին:

Այս ջանքերը լրացվում են կանաչ քաղաքականությունների և բարեփոխումների, շրջանաձև տնտեսության զարգացման և բնության վրա հիմնված լուծումների աջակցությամբ, որոնք նպաստում են ածխածնային արտանետումների կրճատմանը և շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցմանը:

ԿԱՆԱՉ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- «ԵՄ-ն հանուն կենսաբազմազանության»
- «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի»
- «ԵՄ-ն հանուն կլիմայի դիմակայունության»

ԿԱՆԱՉ ԱՆՑՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- «ԵՄ-ն հանուն կլիմայի դիմակայունության»
- «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման»
- ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն»
- «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք»

ՈՌՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- «Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում»
- Հայաստանի ջրային և գյուղատնտեսության ինտեգրված զարգացման ծրագիր

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանի կենսաբազմազանության և բնության պահպանությանը՝ նպաստելով կենսաբազմազանության քաղաքականությունների զարգացմանը, բնակավայրերի վերականգնմանը և կենսաբազմազանության գնահատումներին:

Այն նաև աջակցում է էկոլոգիապես մաքուր բիզնեսներին, կրթական նախաձեռնություններին և հանրային իրազեկման արշավներին՝ ուժեղացնելու կենսաբազմազանության պահպանության և ջրային ռեսուրսների կայուն կառավարման վերաբերյալ գիտելիքներն ու ըմբռնումը:

Հատուկ ուշադրություն է դարձվում Սևանա լճի և դրա շրջակա տարածքների կենսաբազմազանության պահպանությանը՝ աղտոտվածության նվազեցման և բնական էկոհամակարգերի պահպանմանն ուղղված նախաձեռնությունների միջոցով:

«ԵՄ-ն հանուն կենսաբազմազանության»
Աջակցում է Սևանա լճի երկարաժամկետ կայունությանը՝ ամրապնդելով ինստիտուցիոնալ շրջանակները, խթանելով էկոհամակարգերի վերականգնումը և առաջ մղելով կենսաբազմազանության պահպանությունը: Այն նաև աջակցում է կայուն ֆինանսավորման մեխանիզմներին՝ ապահովելու բնապահպանական երկարատև ազդեցություն և Սևանա լճի բնական ռեսուրսների ավելի արդյունավետ կառավարում:

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի»
Աջակցում է գործընկեր երկրներին բնական կապիտալի պահպանության և շրջակա միջավայրի բարեկեցության բարելավման հարցում՝ խթանելով ավելի կանաչ տնտեսական աճը և ամրապնդելով շրջակա միջավայրի ռիսկերի կառավարումը: Նախաձեռնությունը նպաստում է ավելի կանաչ որոշումների կայացմանը, շրջանաձև տնտեսության մոտեցումներին և էկոհամակարգային ծառայությունների պահպանությանը:

«ԵՄ-ն հանուն կլիմայի դիմակայունության»
Աջակցում է կանաչ անցմանն Արևելյան գործընկերության երկրներում՝ ամրապնդելով ածխաթթվի արտանետումների նվազեցմանն ուղղված ջանքերը և կլիմայական դիմակայունությունը: Այն նպաստում է մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների բարելավմանը՝ Փարիզյան համաձայնագրին համապատասխան, նաև աջակցում է Հայաստանում բնահեն լուծումներին, ներառյալ այնպիսի նախաձեռնություններին, ինչպիսիք են՝ Գավառի «Երազանքի այգի» և Տաշիրի «Կլիմայական կամուրջ» ծրագրերը:

ԿԱՆԱՉ ԱՆՑՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանի կանաչ անցմանը և կայուն զարգացմանը՝ խթանելով քաղաքական բարեփոխումները և կարգավորող շրջանակների կատարելագործումը, նաև՝ բնահեն լուծումների կիրառումը: Այն աջակցում է նաև ածխածնային արտանետումների նվազեցման և կանաչ ու շրջանաձև բիզնեսների զարգացման նախաձեռնություններին:

ԵՄ ծրագրերը նպաստում են կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումների ուժեղացմանը, նաև կանաչ աճի նոր հնարավորությունների բացմանը և շրջակա միջավայրի ռիսկերի ավելի արդյունավետ կառավարմանը:

Աջակցությունը ներառում է քաղաքականությունների զարգացում, կարողությունների ամրապնդում և նպատակային գործողություններ, որոնք նպաստում են ավելի կայուն և դիմակայուն տնտեսության ձևավորմանը:

«ԵՄ-ն հանուն կլիմայի դիմակայունության»
Աջակցում է կանաչ անցմանը՝ ամրապնդելով ածխածնի արտանետումների կրճատման ջանքերը և կլիմայական դիմակայունությունը՝ հարմարվողականության բարելավված քաղաքականությունների միջոցով՝ Փարիզյան համաձայնագրին համապատասխան: Այն նաև նպաստում է կանաչ ֆինանսավորման շրջանակների ամրապնդմանը և կայուն ներդրումների ընդլայնմանը՝ կանաչ պարտատոմսերի թողարկման միջոցով:

«ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման»
Աջակցում է ավելի ուժեղ բնապահպանական քաղաքականությունների մշակմանը՝ ԵՄ չափանիշներին և ազգային զարգացման նպատակներին համապատասխան: Այն խթանում է շրջանաձև տնտեսության մոդելները՝ աշխատատեղերի ստեղծման համար, բարելավում է ջրի որակը՝ ավելի արդյունավետ կառավարման և մշտադիտարկման միջոցով, և ամրապնդում է բնապահպանական տվյալների օգտագործումը՝ ավելի արդյունավետ քաղաքական որոշումների համար:

ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն»
Աջակցում է Հայաստանի հյուսիսային շրջաններում ներառական և հավասարակշռված աճին՝ խթանելով կանաչ գյուղատնտեսությունը և ավելացնելով տեղական արժեքի ստեղծումը: Այն նպաստում է գյուղատնտեսական քաղաքականությունների բարելավմանը, սերմերի համակարգերի արդիականացմանը և հողի կայուն օգտագործման գործելակերպերին: Նախաձեռնությունը նաև խթանում է նորարարությունը՝ գյուղատնտեսական կրթության ներդրման և տարածաշրջանային հողերի լաբորատորիաների ստեղծման միջոցով:

«Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք»
Աջակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կամավոր կերպով միանալու և իրականացնելու ԵՄ կլիմայական և էներգետիկ նպատակները: Այն տրամադրում է տեխնիկական և մեթոդաբանական աջակցություն տարածաշրջանային իշխանություններին և խթանում է բազմակողմ համագործակցությունը: Նախաձեռնությունը նպաստում է կլիմայական գործողությունների «ներքևից վեր» կառավարման մոդելին՝ բազմաստիճան համագործակցության ամրապնդման միջոցով:

ՈՌՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանի կայուն գյուղատնտեսությանն ու ոռոգմանը՝ բարելավելով ոռոգման համակարգերը, ջրային ռեսուրսների կառավարումը և գյուղատնտեսության մեջ ջրի արդյունավետ օգտագործումը:

Աջակցությունը ներառում է ենթակառուցվածքների արդիականացում, ֆերմերների վերապատրաստում և կայուն գյուղատնտեսական գործելակերպերի ներդրում՝ արտադրողականությունը բարձրացնելու և բնական էկոհամակարգերը պահպանելու նպատակով: Այս նախաձեռնություններն ամրապնդում են կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունը՝ ապահովելով ջրային ռեսուրսների երկարաժամկետ հասանելիություն և էկոհամակարգերի պահպանություն:

«Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում»
Աջակցում է ոռոգվող գյուղատնտեսության արդիականացմանը՝ բարելավելով ոռոգման ենթակառուցվածքները, ջրի պահեստավորումը, հողերի համախմբումը և ծառայությունների ու ֆինանսավորման հասանելիությունը: Այն համատեղում է տեխնիկական աջակցությունն ու ներդրումային աջակցությունը՝ ուժեղացնելու գյուղատնտեսական արտադրողականությունը Արարատի և Արմավիրի մարզերում:

Հայաստանի ջրային և գյուղատնտեսության ինտեգրված զարգացման ծրագիր
Աջակցում է Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանը և ժամանակակից ոռոգման համակարգերի զարգացմանը՝ ինստիտուցիոնալ բարեփոխումների, կարողությունների զարգացման և կլիմայական խելամիտ ենթակառուցվածքային ներդրումների միջոցով: Այն նաև խթանում է ինտեգրված զարգացումը Սյունիքում՝ արդիականացնելով ոռոգումը և ամրապնդելով կայուն գյուղատնտեսությունը՝ նպաստելով գյուղական դիմակայունությանը, պարենային անվտանգությանը և շրջակա միջավայրի պահպանությանը: